ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԱՐԴԱԿԱՆ

Գինն է 10 կ. Գաւառներում 12 կ. 1911, Շաբաթ, ԱՊՐԻԼԻ 23 -ին. Թիֆլիս. № 17.

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ

«Մշակի» խմբագրութիւնը կաթողիկոսական թեկնածու չունէ, կարող է միայն այս լցուած պարկը առաջարկել և հաստատել՝ որ սա էլ լաւ կաթողիկոսացու է, և ինքը երբէք չէ սխալուել և կամ դիտումներով կաթողիկոսական ընտրութիւններին մասնակցելով՝ էջմիածինը քանդելու

ՇԱՐՈՒՆԱԿՒՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 1911 Թ.

XI ՏԱՐԻ **ԽԱԹԱԲԱԼԱ** XI ՏԱՐԻ

Երգիծաբանական-սատիրական պատկերազարդ շաբաթաթերթի || Լոյս է տեսնում ամեն շաբաթ անխափան

Պաշտօնական օրգան պետական, ազգային, հասարակական և օտարազգի բոլոր մեծ և փոքր, յայտնի և անյայտ, ախտանի և անպիտան, փրկիչ և գլփիչ, անկեղծ և կեղծաւոր գործիչ-կորզիչների և խայտառակիչների։ Անհրաժեշտ թերթ բոլոր ընտարիքների համար։ «ԽԱԹԱԲԱԼԱՆ» շատերին ծիծաղեցնում և լացացնում է, շատերին էլ ցաւեցնում, բայց ոչ ոքի հետ ոչ բարեկամ է և ոչ թշնամի։ Խմբագրին կարելի է տեսնել, երբ քէֆերդ ուզի։

«ԽԱԹԱԲԱԼԱՅԻ» ԲԱԺՆԵԳԻՆՆ Է

Տարեկան . . .	5 ր.
Կէս տարին . . .	3 »
Երեք ամիսը. . .	1 » 50 կ.
Ամիսը. . . .	— 50 »
Թիֆլիսում տարեկ.	4 » —

«ԽԱԹԱԲԱԼԱ»-ի բաժանորդները կարող են ստանալ «ՍՈՒՐՀԱՆԴԱԿ» օրաթերթը պակաս վճարով, երկուսին միասին փոխանակ 15 ր.

Տարեկան . . .	12 ր.	Երեք ամիսը. .	3 » 50 կ.
Կէս տարին. . .	6 »	Մէկ ամիսը. .	1 » 20 »

100 տարով բաժանորդագրուող ցանկացողին 75% զեղչ։

Ջրի կարդացողներին պէտք է նկարենք գլխիվայր։

Հասցէն՝ Тифлисъ Редакція „ХАТАБАЛА“.
Արտասահմանից՝ Tiflis Gaucas edastion «Khatabala»

Խմբագիր-Հրատարակող՝ ԱՍՏ. ԵՐԻՑԵԱՆ.

«ԽԱԹԱԲԱԼԱՅԻ» ՕՐԱՑՈՅՑ

1911 ԱՊՐԻԼ 30 օր

23

Суббота **ՇԱԲԱԹ** შაბათი

Լուսնի 9

24 (կիր.) Տօն գիւղատնտեսաց հայոց մկրտեցելոց, որք բակլա ցանեն—սիսեռ դուրս գայ և ի փոխարէն բրնձի լոբի ելանէ։

25 (բշ.) Ցիշատակ հայ վարժապետաց ի մէջ դպրոցին հայոց մարտիրոսացելոց, որք յետ ամիս ու կէսի, թողեալ բարեկամ հարսի ու փէսի, խուռնացեալ շլեապայիւք և պաչինկա արեալ ոտնամանիւք ելեսցեն բիրժայն զարացկոյ ուլիցաւի։

26 (գ. շ.) Տօն սրբոց աբլաբուդաց հայոց, որք յանկլինս զանազան մութ տեղեաց պարապեն յաջող որսամբ և բեխերն սրբեալ իւղէն համեղ պատառի, լարեն այլ թակարդս իւրեանց։

27 (դ. շ.) Այսօր պաս է այնպիսի, որ աշխարհականք-մեղաւորք բացի խաղանախէն և բալբայէն, իսկ հոգևորականք սուրբք—բացի ինդաուրի մսէն և հաւի չխրթմէն ոչինչ կարեն ուտել, զի մեղք է անչափ։

28 (եշ.) Անուանակոչութիւն զսիրեցեալն մեր պուբլիցիստ Գասպարեանի, որ գասպար-պուկ արեալ ի մէջ մազութի, բամբակի սլաքներ նետէ ի վերայ բրդոց խճճեալ։

29 (ուրբ.) Շարթէգարձ սրբոյն Միսաքեան Առիլի, որ ի յօբելեանին իւրում ասացեալ ճառիւք և ուղերձիւք շիլափլաւ ու բօզբաշ եփեալ զարլամանաւ մատուցեալ է աստղաց և ճառողաց։

Աստղագէտ—տոմարագէտ և օրացոյցագէտ

Փաrեմուզ

ՊԱ՛-ՊԱ՛-ՊԱ՛-ՊԱ՛

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

Հրամայում ենք...

I

ՄեԱf ղաբուլ իԱf, վուr պ. Useփաճ Սուfիասեաճցը իr յաւ ու cճorհալի հաճաfճեrի համաr միr կուսացկութիճի աճդամ ըլի։

II

Աrcակ Եդիզարովիճ պասւիrում եճf զճալ եւ ասsեղեւաճ համբուrել զզաrcապաrճ մեծիճ համայճ պասrիnsnr եւ... հայասողայ զՊուrիcկեւիչի։

III

Սեղrաf Մաճդիճեաճճ, nr բռճել է օձիfճ Ցովհաճու Մալխասի եւ չճրcխաrկ հայհոյեալ կա ճմա. arժաճացեալ եմf պասւաճcաճի.մեճf զիsէիճf թէ ճա յաւ մաճեավarժ է, բայց sաrակուսէճf թէ յաւ հայհոյաճfճեr բըխել էլ զիsէ։

IV

Քաղքի տէրտէրներուն

Զուճfի, այդճի է, nr յաւ կաrf ու կաճոճ պահիլ զիդէf ու էճ էճդամ, վուr էպիսկուպոզ էփrիմճ էլ cճուrհակալ է ձիզմէճ. մաc մէկէլ cաբաթ ձիզ sաւ-sաւ մաճեթ փիcfիc իճf աճում։

V

Էփրիմ էպիզկուպոզին

Լսեալ իմf թէ եrբ խճդrեճ ի fլ.ճ faւrոզ խօսել—ասես թէ՝ «ձէճդ կsrւած է»—աrդ՝ nrպէսզի այդ ձէճը sեղը զայ՝ պասւիrեմ օrեկաճ կէս դուժիճ թոխլօ եւ կամ հում ձու խպcսել։

VI

Վանքի երէցփոխին

Ասասուr Աrութիճովի վաճfի զաւթում թաղւելու համաr ծախսւել է *20,000* rուբլի. յայդմաճէ յայsճի է *12,000* rուբլիս, աrդ n՞ւr եճ մճացեալ *8* հազաrը։ Խusիւ պասւիrեմf բացայայsել ի հակառակ պաrագայիս պիճջակակազուrկ աճեմf զՁեզ, թէեւ զիsեմf եւ հասsաs համոզւած իմf թէ դու.f բաճ չէf վեrգrել. իսկ այլf վասճ srիsուr ծառայութեաճց պաrգեւաsrեալ կաճ։

—

Էս հրամանքները ով չկատարի դժոխքի փայ ըլի, ամա ժամանակ տաք փռնումը տանջւի ու ձմեռն էլ դվորնիկի թայիր քուչէքում էնդղամ կաղնի, մինչկի սառչի։

Իրա սակութար աչ ձեռքով ձեռք քաշեց

Գասպար Կալատուզեանց

Ապրիլ 23—1911 թ. Թիֆլիս քաղքում։

ԱՌԱՋՆՈՒՐԹՈՂ

(Ala Քալանթար)

Իշտահ ունէի էսօր ծիծաղելու՝ համա քէֆս լաւ չէ, իրա տեղը չէ. էս հէր օխնածնիրը իսկի թողնում ի՞ն վուր մէ սհաթ էլա քէֆիս վրայ փիքր անի՞մ։

Մէ մէ աթմօրթի կայ, ասում է՝— Գասպարը ի՞նչ դարդ ունէ, կօսէ։

Արա ես ունիմ դարդ, ես ունիմ խուցեր, էն փիս փիս խուցեր չգիգենաք գէլթաղւայ, ես ունիմ... ի՞նչ ունիմ, դուք էլ կու գիդենաք թէ միլիօննիր ունի՞մ։

Լօթի՛ք, լաւ իշտայ ունիք ա՛յ, օղչում պատարաքը գիդենայ, ես գիդիմ վուր դուք հիմի դիփ էլ գուզիք, վուր մէ շուտ մեռնիմ, էն անդերձը, վուր գըրիլ իմ, նրանով օքտւիք—հէ՛յ գիդի հա՛յ միլիօննէր...

Իշտահ վուր ունիք էդ էլ խճաք. հէր օխնածնիր՝ ես էլ ունիմ ու... աբա ով իշտահ չի ունենայ նա էլ ի՞նչ մարթ է. բաս հիմի վուր մէ լաւ սուկի ըլլին խոռովելիս, վուր խոռոված հուտիցը քիթդ բռնւի, բերնիդ ջուրը գնայ՝ արա, տօ՜ անաստուածնիր չի՞ք ուզիլ ուտի՞, բաս էդ հուտիցը կանի՞ք դիմնալ. հուտ—ի՞նչ է հուտ, ու վունց թէ հօ՜տ, հոտը... հայ ասկլի զաւակնիրը ին, ու հուտ կի ուրիշ բան է. ա՛յ ասում ի՛ն՝ թէ փլան ֆասնը ան փլան փստանը հոտած մարթ է, կօսէ. էս ի՞նչի ին ասում. էնդուր, վուր աշխարքը իմանայ թէ էդ աթմորթին փիս մարթ է։ Մա՛շ։ Ի՞նչ է փիսը, վա՛ հէր օխնածնիր էտղդամ էլ խիլքի զօրութինը չի՞ք գիդում. փիսը էրկու տեսակ կայ, մէկը վուր կպրի հանդի ա. դա վադ ան խարբ մարթու աչքերի համա ա, համա կայ և ուրիշ թաւուր փիս, դա էլ միր գործիչներու համա է ասած, նրանց համա՝ վուր աչքով աչք չունին, քնթով քիթ ուրիշին տեհնելու։

Քի՞թ...

Քիթը ի՞նչ է, քիթն էլ քիթ է, մաշ խոմ ճակատ ան բերան չի ըլլի։

Հէր օխնածնիր քիթեր կան, վուր ղուրուտուտոյի հանդի ին, քիթեր էլ կան նաստաեաշի զագրանիչնի ապրանք ին. էստի ճանաչողութիւն պիտի ըլլի, աթմորթին պիտի գիդենայ բանի էութինը, խօսքի զօրութինը։

Զօրութինը...

Էստի խօ ղոչաղութինի համա չէ խօսքը, չասպանդութինի վրէն է ջուղաբ գալի։

Մարթ կայ մէ գրօշի խիլք չունէ, համա էն թաւուր զօրութին ունէ՝ ինչ ասի, դուս տայ՝ էլի թափաւութ կուլի, վուր նստի.—մարթ էլ կայ՝ ուրիշ թաւուր բան է. ղաչախ է, չասպանդ է, համա գլխումը վուր վուչինչ չկա՛յ, խոմ չի՞ս կանայ, աշխարքիցը մէ մազ պակասցնի։

Զօրութինի բանը էտ թաւուր է, չարութինի բանը կի՝ ուրիշ է։

—Ի՞նչ է չարութինը։

Վա՛հ էտ էլ չի՞ք գիդի հէր օխնածնիր. չարութին էլ վուր չգիդիք էլ ինչ մարթիք էք. զօրութինը զօրութին է, չարութինն էլ՝ չարութին կուլի. բաս խոմ մուզիկա չի ածի։

«Սուրհանդակում» մէ Աշերօն անունով մարթ կայ, նա փթերով էլ քաշիլ է։ Համա ինչ անիս վուր միր Գարեգին Երիցովի գլխումը էդ բաներեմէն մէ գրօշի էլա չի մտնում ու Առաքելով Ամբարձումը կի ջիգրը Օխանէս Թումանովիցն է հանում։

Սա ի՞նչ է։

Ձիզ համա մէկ չէ թէ ով կուլի կաթղկոս—մէ բան վուր դուք չպտիք ըլլի։

Ֆի՜է... ով գուզէ ըլլի. ու թէկի էտ էդպէս է՝ բաս էլ ինչ էք գլխներդ քարովը տալի, քիթներդ երկարցնում, առանց էն էլ Լևոն Բաբայևի քիթն էլ զահլա է տարի, քուչումը մարթկերանց չի թողնում վուր անց կենան։ Չարութինը իրա տիղը ունի, զօրութին ն պտի իրա՛նը գիդ՛նայ. առանց զօրութինի ձիր խիլքը մէ գրօշով չիմ առնի։

Էտինց է իմ խասիաթը ո՞վ հաւնում է՝ թող հաւնի, իմ բաժինը ինձ տայ, ով չի հաւնում, թուղ ինչ վուր ուզում է քէֆը՝ էն անի, խուրդէն ստանայ։

Գասպար Կալասուզով



ԲԱԴ.

Տեղական ռուսերէն „Закавк. Рѣчь“ թերթը յայտնում է թէ պ. Համբարձում Միլիքեանը 50—60 հազար րուբլի է նուիրել «Հորիզոն» թերթին՝ հրատարակութիւնը կանոնաւոր դարձնելու համար։

—

«Մշակը» լսելով այդ՝ հետեւեալ համարում յայտարարեց որ դա ոչ թէ իրողութիւն է այլ «բադ»... և կամ ընկած ակցիաների բարձրացման ջանքեր։

Մենք հաւատում ենք այդ «անկարելի» նուիրաբերութեան եւ կսկսենք պատմել սկզբից մինչ ցարդ այդ մասին տեղի ունեցածը եւ «պաշտօնական» շրջաններում ասած խօսածը։

I

«ՀՈՐԻԶՈՆԻ» ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ

Մարգար.—Եղբայր փող չկայ, ինչով հրատարակենք—անտէր հարուստները մեռնում են, կտակներ են գրում ու իսկի էլ չեն յիշում թէ հայ գրողներ էլ կան ու «Հորիզոն» թերթ էլ գոյութիւն ունի։

Խմբագիր Սահակ.—Յայտարարութիւններ էլ որ չեն բերո՜ւմ։

Աղայեան.—Բա որ ասում ե՜մ, էն զատը՝ Համբարձումին մի տեսէք է, էնդդամ գըջլում է որ...

Աւ. Իսահ.—Ա՜խ, վա՜շ, ա՛յ օրեր, էհ, անցան օրեր, այս պղծւած երկրից երբ պիտի՞ ելնենք, թռչենք, սաւառնենք, հեռու աշխարհներ...

Յով. Թուման.—Դէ ինչ էք գլխներդ զոռով տրաքացնում, քիթերդ կախում, ունքերդ կիտում, ես հարուստների մօտ՝ շատ տեղեր եմ ընում, նրանք ասում են. որ փող են ուզում...

Խմբ. Սահ.—Ինչ են ուզո՜ւմ, փող են ուզո՜ւմ։

Յով. Թում.—Հա՛, փող են ուզում տալ, գլխիդ արևը, որ թերթը հրատարակես։

Մարգար.—Չէ ջա՛նըմ, չեմ ուզում հաւատալ. հայ հարուստը թերթին ու էն էլ մեր թերթին, երբ փող կըտայ։

Լէօ.—Թէև չեմ ուզում ձեր գործերով զբաղւել, բայց այս պիտ ասեմ, որ պատմութեան մէջ մենք նկատում ենք, որ հայ հարուստները փողեր են տւել...

Աղայեան.—Տւել են, տւել, բայց հիմի չեն տալ, ինչի որ նրանց հոգին էլ է դուրս եկել. էնչափ առան որ... սուտ ու ղորթ ասին որ... մեռած-կենդանուն, ազատ բըռնւածին, շկօլ ու...

Յով. Թում.—Ես գիտեմ կըտան—ինձ որ տալիս են. բա ինչով եմ ապրում. էտ էլ որ չըլլի. ախ ինչ լաւ կըլլի, որ մէկը փող տար, էս աներես գրաշարներին, թուղթ ու տպարանին, ցրւիչ մրւիչին, պոստ ու կանտորի ծախքեր հոգային։ Մէկը որ տայ Է՝ շատ լաւ կըլինի։

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԸ

Իրաւաբանը

Ինժինները

Անտառապահը

Բժիշկը

ეროვნული ბიბლიოთეკა

Մարգար.—Տուտուց ես խօսում, հայը փող չի տալ ու էն էլ մեզ պէս... (Նիսը փակւում է):

II

ԿՈԽՍԱՆԱՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԱՒԹՈՒՄ

Թաղթախման գիշեր

(Ըստ սովորականին ժամ են գնացել հայ բուրժւան և սոցիալիստը և հայ տիրացուն և տէրտէրացու՝ հայ ինտելիգենտը. խօսում են, ասում, ազգի ցաւերից մեծ-մեծ հոգսերից):

Մէնը.—«Մշակում» գրած էր, որ Երիցեանը Մոսկւա էր գնացել ու 150,000 րուբլիներ «Սուրհանդակի» համար նա նաղդ փող է բերել:

Միւսը.—Հաւատա, որ ըլէր, բուրժւական թերթ է, դէ հարուստներն էլ իրենցին կօգնեն:

(Անցնում է Համբարձում Մելիքեանը երեխաների հետ միասին և 150,000 անունը լսում. ականջները սրում է. տեսնում է «Հորիզոնի» Մարգարին):

Համբ. Մելիքեան.—Հ՞ը, ինչպէս էք պ. Մարգար, ինչպէս են ձեր գործերը, քէֆ, հալ ու մալը...

Մարգար.—Ի՞նչ գործեր, ի՞նչ քէֆ ու հալ—Թերթերում գրողի հալն էլ կըհարցնե՞ն—մանաւանդ էսպէս ուրախ օրերին:

Մելիքեան.—Ինչի՞, ինչ կայ որ, թերթը պակաս է գնո՞ւմ...

Մարգար.—Ինչի՞ է պակաս գնում քիչ-քիչ (շաբաթը կամացուկ) 8—10 հազար է տպւում, որ ուզենք քսան հազար էլ կըտպենք, մեր ձեռը ո՞վ է բռնում:

Մելիքեան.—Բա էլ ի՞նչ:

Մարգար.—Քանի շատ տպւի էնչափ շատ փող կընստի:

Մելիքեան.—Մ՞թէ:

Մարգար.—Բա էտ էլ չէք գիդո՞ւմ. թերթին հարկաւոր ա՝ տարէնը քսան քսանեհինգ հազար սուբսիդիա:

Մելիքեան.—Տասնեհինգ հերիք չի՞ անի:

Մարգար.—Ինչի՞ չէ, հերիք կանի մի չորս հինգ տարի, որ անպակաս էտպիսի մի գումար ըլի:

Մելիքեան:—Այդ թէ մայիսի 1-ին տաբ՞ն—ինքս կըտամ 50—60 հազար:

Մարգար.—Կարելի է հաւաքել դուք ինչի պիտի տաք:

Մելիքեան.—Հէր օրհնած, ինչ բան է որ... էդ տեսակ փողեր մենք քի՞չ ենք ծախսել... ազգային բան է, գրողների հարցն է...

Մարգար.—Ա՛յ չէն միայ ձեր օջախը, էն Երիցեանն էլ միշտ ճիշտ է ասում թէ հայ հարուստներից լաւ բան է սպասում:

Մելիքեան.—Գնանք ժամը, պատարագը սկսեց—(գնում է):

III

Մարգարը պահ մի կանգնում է շւարած եւ դէս ու դէն է նայում. 50—60 հազարի ուրախանը տեմնում ու վազէ վազ դէպի Վելեամինովսկի փողոցը փախչում: Ճանապարհին հանդիպում է Լէօին, Ղազար Աղայեանին, Յով. Թումանեանին եւ մի ստւար խումբ գրաշարների, խմբագրատան ծառայողների, որոնք փող են ուզում, տօների համար ծախսելու «ձու ու զոճի, զառ ու պասկա, գինի արաղ» գնելու փող...

Մարգար.—Յովհաննէս ջան, դու ճիշտ ես ասում, մեզ փող են տալի, էնա հա Մելիքեան Համբարձումը հէնց նոր ինձ ասաց որ 50 60 հազար րուբլի փող թէ որ հերիք է գրողներին ու մրողներին—ինքս կըտամ, ասմէ:

Աղայեան.—Էտ ոնց էլաւ է, աբա մի ասա:

Լէօ.—Պատմութիւնը մեզ ցոյց է տալի որ հայ վաճառակ...

Թումանեան.—Բա ես ձեզ չէի ասում, խի, բա յիմար եմ, ինչի, որ էսպէս չլէր, ես էդ ինչի պտի ասէի:

Մարգար.—Զորս-հինգ տարով թերթը ապահով է 50—60 հազար նա խոստացել է:

Թումանեան (դիմելով գրաշարներին).—Դէհ խօ իմացաք, էսօրէլ տօն է, էս տարւայ փողիցը մի տասնեհինգ հազար կխընդրենք որ տայ հէնց որ տօները անցնեն ու գնան. հիմի տօներ է, բանկերը փակ է, մի կերպ եօլա գնացէք. ռոճիկները կաւելացնենք 50—60 հազար մանէթներ է է մասխարութիւն խօ չէ... Մելիքեանն է խոստացել է մասխարութիւն հօ չէ. էդ փողը Ջիբումը ունենաս թէ բանկումը բոլորն էլ մին է:

Միւսները.—Մասխարութիւն խօ չէ՞:

Աղայեանը.—Բա՛, թէ Երիցեանը կըբերի ու էն էլ հարիւր յիսուն հազար...

Թումանեան.—Ասենք էդ սուտ է, նա բան չի բերի: Մենք ասինք, որ նա էլ է բերել. ինչ ինք կորցնում, մեզանից խօ չեն... թէ բան է կաւեցնեն էլ ո՞ւ...

Լէօ.—Դէ իսկապէս որ լաւ թաթախում է. 50—60 հազար լաւ բան է. ապրես Մարգար:

Միասին.—Ապրէ Համբարձումը:

Աղայեան.—Էդ ո՞ր Համբարձումը, էն զատը...

Միւսները.—Է՛, դու էլ մարդու անում ես տալի էլի, նա կի չէ՞—Համբարձում Մելիքեանը:

Աղայեան.—Թող ապրէ, շատ ապրէ, Մելիքեանը, որ 50—60 հազար նւիրեց մեր գործին...

IV

Իսկ մեսասան աշակերտները և բանւորները գնացին...

Ահա այդ օրից տարածւեց ամենուրէք, որ Մելիքեան Համբարձումը «Հորիզոնի» համար 50—60 հազար րուբլի է նւիրել—այդ լուրը փրթկոց հանեց ամենից առաջ խըմբագրատներում,—յետոյ՝ շրջաններում և այնուհետև գնացին ու դրա դէմ դաւեր լարեցին և ասեցին, թէ այդպիսի բառեր են թոցնում միայն:

(Կըշարունակւի)

ԻՄ ՆՇԱՆԱՒՈՐ ԿԵԱՆՔԻ ԸՆԴՀԱՆ ԳԻԾԵՐԸ

(Ինքնաբուղխ գծեր կենսագրութիւնից)

—

Առաջին գլուխ, առաջին ոտք

ԻՄ ԾՆՈՒՆԴԸ

Ես ծնւել եմ իմ մօրից՝ հօրս համաձայնութեամբ, բնութեան թելադրութեամբ, պապ ու տատիս օրհնութեամբ ու նրանց բոլորի էլ պատկերի նմանութեամբ:

Ծնւել եմ սովորական ձևով ու բնական եղանակով—մերկ ու բոկոտն, խաւարից դէպի լոյս, նեղից դէպի լայն, տաքից սառը, հեշտից դժւարը...

Ծնւած ժամանակ գլուխս մի քիչ (դուք շատ հասկացէք) մեծ ու հաստ է եղել, և պապս, որ վկայ է եղել իմ աշխարհ գալուն, առանց վարանելու ասել է տատմօրը, որ «այս ճուտն անպատճառ վարդապետ կըդառնայ»: Տատս էլ ձայնակցել է: Տատմէրն էլ վաւերացրել է:

Եւ ճ հրաշք, այդպէս էլ եղաւ:

—

Անցան, գլորւեցին 30 կարճ ու ձիգ տարիներ, և տողերիս գրողը՝ ձեր բոլորի խոնարհ ծառան և իր գլխի գոռոզ թագւորը՝ դառնում է վարդապետ:

Եւ այո՛, այսօր նա—գլուխը և փորը հաստ վարդապետ է:

Վաղն էլ—գլուխը բարակած և փորը դեռ հաստ—կըդառնայ եպիսկոպոս:

Իսկ միւս օրն էլ—համ գլուխը բարակ, համ փորը, ինքն էլ հալից ընկած, արխիւին միայն պիտանացու,—կըդառնայ կաթողիկոս, և այն ժամանակ, աչքներդ լո՛յս, կունենաք, Եզրաս I կաթողիկոս հանդերձեալ աշխարհի...

Զարմանալի ճիշտ կերպով գուշակել գիտէին «մեր նախնիքը» և յոյժ զարմանալի է, որ նրանք բոլորն էլ, առանց բացառութեան, մեռել են...

Ողորմած հոգիքը ինչ գիտէին, որ ես մարդ չկարողանալով դառնալ՝ վերջը, ճարահատեալ, վարդապետ պիտի դառնայի: Չէ, մի մի ասացէք տեսնեմ, այդ հանգուցեալները որտեղից կարողացան այդչափ կենդանի կերպով իմանալ, անսխալապէս եզրակացնել, որ ես թողնելու եմ մեզ շրջապատող անիծեալ մարդկանց համար ստեղծւած օրհնեալ աշխարհի այս հայկական դաժան անդաստանը և մտնելու եմ սևերի մէջ՝ սպիտակներին լաւագոյն կերպով անիծելու ու «սևերին» վատթարագոյն կերպով օրհնաբանելու:

—

Ծնւածս ժամանակ ոչ ձեռքիս բանս և ոչ էլ մի ուրիշ տեղ «արեան նշան» չեմ ունեցել,—դրա համար էլ չնորհ չունեցայ յեղափոխիկ դառնալու, թէև աջող կեանքի ձախող պայմանները և ձախող ժամանակի աջող ու անյաջող հանգամանքները վերջին տարիներս ինձ թունդ ծայրայեղութեան հասցրին: Բայց Աստծոյ ողորմածութեամբ

եթէ շուտով եպիսկոպոս եղայ՝ այդ ծայրայեղութիւնից էլ ձեռք կըքաշեմ. իսկ թէ Աստուած արեց ու իմ եպիսկոպոս դառնալս չուզեց՝ այն ժամանակ անպայման ու շատ շուտով աշխարհիկ կըդառնամ:

—

Ծնւած օրիցս հաշւելով ամենայն տարի կեանքիս վրայ մի-մի տարի աւելանում է, իսկ մեռնելուս օրից յետադարձ՝ իտալաամերիկական ձեւով հաշւելով՝ մի-մի տարի պակասում է:

—

Օրերս ձիգ ու միգ տալով՝ աննշան կեանքըս հասցրի նշանաւոր կէտի՝ եղայ 8 տարեկան:

Եզով ծայրայեղ վարդապետ

ԷՆՑԻԿԼՈՊԵԴԻԱ

Բ.

Բ. հայերէն այբբենի 2-րդ դասն է:

Բանտ.—Դպրոց, որտեղ սովորում են կեանքի հերոսները:

Բաղնիս.—Մի տեղ, որտեղ մարդիկ ներկայանում են այն դրութեամբ, ինչ դրութեամբ որ նրանց ստեղծել է բնութիւնը:

Բունդ.—Միջոց, որով պղտոր ջրում ձուկ են որսում:

Բակլա.—Գործ են ածում լղար մարդիկ փորները ուռցնելու և հաստ երեւալու համար:

Բազազ.—Արշինը 15 վերշօկ ցոյց տւող ֆօկուսնիկ:

Բնեդիան.—(Տես ափռակ).

Բադիբուդի.—Զօր միրգ, որ գործ է ածւում վեչերների և բալերի ժամանակ:

Բեբիա. — Համալսարանաւարտ մանկաբարձուհի:

Բարաթ.—Պարտաթուղթ, որ տալիս են պարտապանները փողը էն աշխարհում վճարելու նպատակով:

Բութիլկա.—Գինու շիշ որին ատելով ատում են հարբողները:

Բումաժնիկ.—Փողաման, որ ամուսինը լցնում է, իսկ կինը՝ դատարկում:

Բախտաւոր.—Ասւում է այնպիսի ամուսիններին, որոնք Աբրահամի և Ղովտի նման աջ ու ձախ են գնում:

Բլուզ.—Հագուստ, դրա կապոյտ տեսակը շնորհւում է սօցիալիստ մկրտւողներին:

Բզըգեալա կամ հոլ.—Մանկական խաղալիք որ պտտւում է մտրակների հարւածների տակ այնպէս, ինչպէս որ մի քանի հայ գործիչներ պտտւում են աջ ու ձախ փչող քամիների ազդեցութեան տակ:

Բեխեր.—Գիշերը խճճւող, իսկ ցերեկը ցրւող զօրքեր, որոնցից ազատ են քեօսագալըղները:

Փարեմուզ

ՄԵՐ ԳԻՐ ԿԱՐԱՐԵԳԸ «ՕԹԻ»-Ն ՔԱՐՈՒԶԸ

Ի Հաղրուծ չէն

—

Մեր նղրութա պառաւ կնանէքը մին շեփտաւ առաջ հազըւալ ին, ելլախ, զատ պաղբաստալ, վէր օթի ըրուգյունը Քրիստոսերա սուք անին: Պարուն Քեասպար կամ «Խաթաբալէք», դէ շատ ապրած, աշխարք վնտան տակ տւած մարթիք ըք, կգիդաք, վէր օթին քշերէն կէսումը վրցակեն ըռչի թւէն նհետ կսկսին: Հեալա մթնած վեչ, տեսնամ զնգեակէն մէյն օտում ըն, մին խիլլա ըրմացէ, ախպէր, կասիմ թեզա-թեզա պէներ շատ ընք տըսնլական. տարուն նհետ ընք քյնում: Քեցին ժամ. . տեսնամ հինչ, բալատ մեռնի վեչ խեղճըս, օթին շինալըն հրամնէք. շոնը տարը ճնանչում չի, մեծ, կուճիւր ուրուր խառնըւած, օժաւն ա պեն տեսնում, մննատակ տալիս: Թարիփ չնի, կողիս թա շատ կարելի ա տիւք ինձ

ՓԵԼԻԷՏՕՆ

ԶՐՈՑՑ

—Ադէր. մաղուլ ընցած տարի քարօզ իր խօսում, դու գուզումըս որ հայը՝ քարօզի համար մեռած ա, ինի տա Բաքու, Պետերբօրգ, Անդալի, Քարահունջ, թա Պարիժ, ժամը լօխ լիգը կընի, ամմա քարոզում ասըմ, ղարավալի չինի, համ էլ էրկու իրէսանցի խօսիլ միք, դէ հինչ անէնք թա էս՝ պասի օխտը շափաթը ձեզ գեալուր չիլալ, տու լաւ ուստայըս, ղաբուլ չիր անում որ ծօխին իրան թովջի տընուի, դօլուղ ստանիք զահլա տանիք վէչ, էլի լաւ կանէս որ քու ասածըդ անէս, նաէ վէր մասնը առնողից իրէք մանէթ առնուի, հարուստ մեռալը, եա փաակը իցցունըօթ մունութ առնուի քասիբինը օթ. զանգըն էլ հարուստին մէծաւը, քասիբին պուճուրաւ, հարուստից առնուի թովջի օթախից, տընից փանջարից, զուլուղչուց, քանի սաժին տափ օնի, քանի փութ ա ծանդրօթիւնը, քանի ակցի օնի, մին խօսքով կարըմըս ջան տօ նափաս տալմիր: Հա, քարոզի համարի ասում. սկսեցիր Հայր մերից, եկիր լափ հանաբազօր տուր «մեզ» կաղնեցիր, սաըտ փօըտ քըցէցիր. հմիկըմ գիւղում, վէր տա լօխ փարաջաւէրներին համարըս ղաչանք արալ Աստուց, նա էլ բէդամաղ չարալ ձիզ, ընցած տարին հինչքան ասէս քօք մէռալնէր, դօվլաթու հըրսանիքներ կար—լաւ եղ.եցիք: Մին էլ տա փիս պանա, վէր վէսկի հինգանոց տինումըք. պուտնինան մէծ մանին արալըղըմը խըչըհանէլուց ասում թա՝ «սա պահպանէսցէ զմեզ», խէ ջանըրնէրըդ տուս կըկիա, վէր մին շափաթ ասէք՝ «զմէզ», էն մին շափաթ՝ «զձէզ». ախըր հինչքան վէչխարը քօք ինի, մազը էրգան կինի, դուք էլ լաւ խօզօղներ: Միտս ա եկալ ասըմըմ, ընցած տարի Ժելէզնավօդսկի. բալքամ հազարից աւել բուսի տէրտէր կային, լօխ արնաքամ, չօր տառէխներ, եկալ ին մալըշի. ասի մին հայի տէր աչքաւըդ կընգնի խէեա ինըմ դուք ձեր հէսաբը լաւըք գիւտում ջուրը փըշըմըք, եռօ խըմըմ, փլաւին տակը բօղբաշին կլօխը օտում, ցաւը հինչ զալաթա արալ ձիզ մօտիկանա, տըռըզէցէք, քօքացէք, լափ տհալացու տէռէք, խօսք ասող կաւէչ. ամմա մարթ, վէր մին զուլուղ վիզաւ առնի՝ պիտի կատարի. տասը տարուց աւէլ ա, վէր էջմիածնի—դաւթարխանից կիրալըն ձեզ վէր հարընան մարը հայ ինեւուց, թազա ծընւած խօխին հայի անուն տիրէք վէր օրիշ ազգի հէտ խառնուի վէչ, ղալմաղալ տուս չի կեա: Բա ուսումնարանի մունթերին շատինը հայի անուն ա, ղարաբաղցինըրը Բաբաջան, Աղաջան, Միրզաջան, Նաննա-գիւլ, Թազա-գիւլ, Նարինգիւլ. շամախեցուց՝ Զաւադ, Զհանգիր, Զումշուդ, Նարգիզ Գիւլնազ, Սհանազ. Ն. Նախջւանցուց՝ Արխիպ, Ֆադէյ, Տիմաֆէյ, Էվէլլինա, Ագրաֆինեա, Անտօնինա (լափ էդ գըռ բըթաւտ փօխսը կընգնուի): Հայը վէր կա մէյմունի օրում մին պան ա, լօխ եօր օնում օրիշից խօսքի. շէնից կեալուց տէռնըմա չըմօշկ, եռօ մաս, չաքմա, կալօշ, մօթալանի փափաղը՝ գարիբալդի, շլափկա, ցիլինդիր. տա էնքան մնաս չօնի, ամմա անունը հինչս ասում, պաշպօրտումը կիրած ա. Բաբաջան Աղաջանեան Միրզաջանեանց. կարտըչքըմ տահած ա՝ Պաւէլ Ագաֆօնօվիչ Մինաև: Բալքամ մին սև օր տըրան ճօկեցին Պետերբօրգի թաքաւորական զումումը գիպիտատ, էն տափը թումը արած մարդիմաջար Պուրիշկևիչը փըռնըցրաւ պաշպօրտըհան, կարտըչկան, եռօ հունց կընի, խէ մըտատ ընգալլա Օդէսի ջհուտ Ահարօնը Արկադի տէռնալի համար, խէղճին թօղեցին վէչ մափռաշըն էլ պէց անի, չուլուփալտչի ըռխաւը տւին հալլա կիրէցին Օդէսի նաչալնիկին, վէր դրան կընքօղ ռաբուն, համ էլ ուրան կաղամաթ նըստըցնէն:

Աղէր. խէ տէզըս տէռնալու պատան կըպչէս. ծօռ նըստէնք, զուզ խօսէնք, զաղաբում չըք հինչ վիզաւըք առալ, խէյըս սուս արալ, խէ չըս խըրատում. ընցածնէրը քու ծօխումըդ մին բաղաղ մէռաւ, դու էլ աչքէրըդ չըռած, պլօզ արած նէզ կայնած իր, վէր կընէգը դուքանին գեալին ասաւ թա՝ բընտ Նօղանդ Օհանովենց մաղաղինից վէց օխտը «վէնիկ» առ պէր տիր իրան: Բօօ... վէնօկը վէր կարըմ չի ճօկի վէնիկից, էլ խէեա համ մեռալը, համ էլ ջուրը թիթեցըըմ, ախըր մենք տեսալ ընք, լըսալ

ეროვნული ბიბლიოთეკა

ճընանչում չընիք, ամմա մեր մհալումը բա-
բաթ ընք, ընըմնես իշւում ա հղէ պէց ը-
րեն. մին թեարզաւ մոտ ժոմ, տեսնամ
հենա դէր Կարաբեդը Մալիքսէթին նհետ
աւըտարան ա կարթում էս դէր Թեմուրն
էլ ուրանան մեծ ոհակ եր կալած՝ էս ու էն
կնգան կլխէն թըմփըցնելաւ անգուճ օնել ա
տալիս. աղբաթի խէրտ էտ զօլաւ շատ լէաւ
ա կողիս թա ըսկի մին դէրացու չընի։
Կնանէքը ըրփըթարուրը զատը վէր պըր-
ծան, շամերը հընգըցրին, դէր Կարաբեդը
եր ըլաւ մայրաքոյրին քամակը. լօխ սուս
կացին, կնանէքը գդացին վէր կդակը կըր-
թիլին ժամանակն ա, յըլխնէն հնեցին, էնա
հա, օղում ին «Մարիամ Աստւածաձնա ա-
ղիղ բալան եր օնին. տենանք մարաքոյրը
պըցըրցրեն շամերը նի կցրեն, մէն շըփլ-
թուն ընգաւ կնանուցը միչը, ա դէր պա
կդա՞կը, կդա՞կը, Մալիքսեթը թա ըննական
չի, դէր Կարաբեդը եր ըլաւ սեղանեն պտօ-
կը թէ դէ քարուզ ըմ սլական կդակէն ա-
ւաղ, անգուճ կալէք. անգուճ օնողը հո՞ւ ա։
—Արա Կարեկին, ըտեղ մին չորսին լա-
ցացրու, աղա՛ էհէ՛յ, ա ղամմաղ լաւ անգուճ
կալ. ժամումս է՞, կլըւում չըս։ Թեմուրն էլ
ընդեղ ուրան պէնը տեսնամ ար ապրէ։
—Կա՛ սիրելի ժողովուրթք, ա կտըրւէք
տիւք, վէր ամեն ժամանակ էլ ահենց ժամ
կեաք հինչ կնի՞։ էս մեծ պասումս հւատաս
5 հետ ժամ ասած ընինք, ձղանա վէրը կնի
երկու հետ եկած, դուզն ըսեցէք։ Գիտում
ընք, վէր վէնօկը կըտինէն ուրան ջանը
ազգի խեղուրին, թամաքար չինի (թէքըտ
կօլ մի տալ, մալաւ կէնալ. քեզ իրա սկի
խինդէղնու վէնօկ էլ տինէլ չըն) ղօչաղ
ինսի շհար առած պահած ինի. թէ վէր չէ
էտ թաղա մօղը վէր մէզանում մօղա ըն-
գալ, էքուց մին հարուստ չալաւմիշ նօ-
թատէր օխտը փըրգօն մեռնելուց վէնօկ
կըտինէն, ալօր եարամիշին տասնըօխտը
կումշի արար. տա լաւ չի, լաւ։ Մենք սօվ-
դաքար ազգ ընք, իլաւ հալլա Պետօր մեծը
դըրա համար մին կիրած թօղտ օնի, ամա
հմիկ փօխւալ ա։ Դու գուզում ըս, վէր մեր
Կաւկազի ամեն շհար մին փէշակի մարթ ա
տամ, խօսքի. Հաղրութը՝ քարտաշներ, Հ.
Նախիջեան՝ աշպազներ, Աքուլիսը՝ բաղազ-
ներ, կանդիտերներ, Շամախին՝ ասըմչըմ,
Երէւանը՝ մարդիմազարներ, Սխնախը՝ համ-
բալներ, Գօմրին՝ դուքան կտրողներ, Գեան-
ջան՝ ասըմ չըմ, Տփղիսը՝ գինի ծախողներ,
Ղալան՝ ասըմ չըմ, Բաք՝ զումարբազներ,
Դարբանդը՝ չինօվնիկներ, Շօշու շէնը՝ մա-
տաղ ուտողներ, Վաղարշապատը, մին էլ Աշ-
տարակը՝ վարթաբէդներ, ամա Ախալցխան՝
տէրտէրներ։ Իմ խօսքըս սուտ խօսք չի, հա-
ւատըմ չըս, ճըղէ ընդի բնա Ղուբա, Դար-
բանդ, Պետրովսկի, Կաւկայ—լօխ տէրտերը
ախալցխացիներան. հինչ ասիմ, դինջ լաւ
փէշակ ա. ասըմ թա փիլօն կեցալըն պըր-
ծալս։ ամմա Աստուած տա վէր քեզ նման
չինին. խէ հէնցըս գիւղում թա մընաս ըն-
գլա, վէր շուտ ձեռնատըրուելի համար, եր
ըք, վէր ծեր վերջնական տօնը ռայա, Աս-
տուծու ծերքան փըխճըլական չըք հու, խէ
կտըրւում ըք թա ժամ կեաք. էշը վէր էշ ա
ուրան ախուռը ճնանչում ա, շօնը ուրան
պեռնին երա ա քյնում, պա նհանց մըչուք
էլ չկա՞ք, ա կտըրւէք տիւք։ Ա՛ ղանջըղ է
հէ՛յ, քեթկալըդ վէր քաշի, պա ըոխումըս
հինչ ըմ ասըմ, Սիրելի ժողովուրթ, կգի-
դաք, վէր սա օթի ըրուդյոննա Քրիստոծ
ա ուրուն մըռնելի օրը, ամմա վախիք վէչ
Աստուծու տղան չի՞. ընձանա օղի 3 օրան
ետը էլ ետ սըղացած, աեղան եր կացած։
Սիրելի ժողովուրթ, Քրիստոծը Մարիամ
Աստւածաձնա մաղար տղան ար հեարն էլ
Աստւած։ Հունց վէր ըրեւէն շողքը ընգյնում
ա շուշին միչաւը տօնը լուսաւերում, համ
էլ շուշան կտրում չի, նհեց էլ Աստուծու
միտքը հանց մտաւ Մարիամէն մաչը, յղա-
ցըղց, վեր նա եղնա կուս մնայ։ Քրիստոծը
խըատում ա ժողովուրթին, թա ծռռ հըղը-
ղըրաղ կացէք, չնութուն չանէք, մհեգյ ա
կտըրւէք տիւք. համեյա նրա թեարիփը էս
ժամումը հիւր հետ է ընք կարթում, ծըղե-
տէ շոն ընք հաչում, խէ կեալիս չըք ան-
գուճ օնէք, տիւք գիղըմ ըք թա հալալ մե-
ռուն ը՞ք. ծըս նման անեըւ չաթուքեասն
հեալա էս երգիրը ծնալ չի։ Մէկալ օրը
Ղաւմանց տանան կեալիս. մընըթական
տըրւըղորմոս վէր ընգեաւ մին սահաթէն
մաչումը տափը ծածկեց նի մտաւ.
Էլ սամէ չըք թողալ տըռանըս, սմբետան,
կացիր մեր ադէին աչքի լուս ճարը մաղար
Րաֆֆուն, իրան էլ օլմիան պան չի մնաց
վէր գիրէիր վէչ... Հունց մ, իրէսդ ւանայ
հունց վէր սւացաւ հալլա Րաֆֆուց մէր
խօխէրքը շնօրք, մարփիաթ մարթաւորու-
թիւն սւէրէցին, բա քէզանից հինչ պէտք
ա սւերէին էսօր հինչ ա «Արամազին» ակ-
ցեան առնէմ սարփա թա «Որոտանը» վէր
բանկումա շատ մուղաթըն տամ փողը պա-
հէլի համար. դէ վէր տիեր տի մին կէս ա
կեազ եօր օնէիր բազազի դուքան պէց ա-
նէիր, էդ փարաջան կէնայիր վէչ, մարթ-
քանց աչքէրին մօխուր թափ տալի համար.
այ ինձ սաեզծողը, դա վէր օր ա ինելու,
վէր մին ջահիլ, սումնական, ղօչաղ կաթղօ-
կօս ունենաք, ջօկէնք վէր մին ծէռնինծիպ-
լի, մին ծէռնին ղամչի, մին փարա դէրեռի
քըշի տանի լափ Արազից էն զօլը, ասի թա
բօլա, քնացէք Թէհրան ղալաբաղի Եփրեմ
խանին կօշար, փիդայիթիւն արէք։ Աստ-
ւած տա արաղըս գաղարի։
Հա, խօսքըս կէսատ մնաց, մեր ազգը
սօվդաքար ազգ էր, ամմա հմիկ խարաբ ընք
իլալ. առաջ կօտըր ընդնիլը եա մեռնիլը
մին էր։ Շամախի մինը կօտըր ա ընգալ,
հինգ տարի տընին փարտէքըն էլ քաշ ա
տւալ, տընան դուս չի եկալ նհէնց էլ մէ-
ռալ ա. ամա հմէկ կօտըր ընգօղնէրը աջու-
ղու Կիսլավօդսկի, գուվէրնանտկա, ֆայտօն,
լակէյներ անըմըն. պահըմըն։
Հու վէր օղում ա ըուսերէն կիրաչանաչ
ինի, կեա Բաքու եա օրիշ շհարն էր վի-
ցակատ, կացէն չըք թողալ քեանդալ ըք
քարըը քսալ, պա ծեր ըրեսին մըռռնու
պատառ չկա՞։ Աւալ մաղուլ սէր կար, հա-
լալութու կար, դէրը թաքաւէրու պադև օ-
նար, ամմա մհեգյ, էն օրը ծեամ ծոր, ըղը-
ջանանց Կիւքին թըղելաւը, ժըմըհացէն կրե-
ցէ վէչ կենամ, մինչի մին կեարմուր, ըըը-
սական վըրցըկաճոտ ինքյ կա՜լէ իմմ ինձ
հասաւ։ Քրիստուծ լհա ծըս նման ըշերէն
ծերքաւը քնիձ։ Լեաւ անգուճ կալիք. է հէյ
ա լակոտ, եաւո՛չ, քեզ մասը տալիս կա-
սիմ։ Իիւք կգիդաք, վեր Քրիստոծա 12 ա-
շագերդ օնար մինը Յութան ար, նա շատ
փողասէր ար մեր. մին քանի ըրաստւ
խաթրու Քրստոծա մատնից. ասըմըք դէր
Կարաբիդը ասըմ ա, լաէխը թեարս ա պէց
անում. վէր քարը տա դէր Կարաբիդը ու-
րան կլխէն վէր ասէ վէչ, ծըղ նման վերց-
վերց ըշերէն ծեռնան թօրը քյնի։ Ծըղա-
նում գիդում ըք թա Յուդայի խրեգ կա՞, էն
գեօրբագեօռ Ռըքալանց Ակին չար, վէր
վարթաբետը եկած վխտէն ընձաննս ման-
նալ ար, թա չըհասը հաս ընելին 40 մա-
նէթ ա ինք կալալ, փլանէն խոխան փողը
պակաս ընելին դեարդան մըկըտալ չի ժամ
ասելը գդաս չի, քիբլին տօնը օխնում չի,
ժողովուրթեն ուշունց ա տալիս, ըստի յա
անում. ընդի ա անո՞ւմ. ասա աշկէտ մաչն
էլ ըմ խառնալ, ըղաչանք ընելիս լեաւ մը
թա եկ փսակէ. ծեր էշու փեսհլան ըմ վէր
առանց փուլը թամամ ինք օնելը կարք կա-
վէսկա կարթի, էսօր՝ ...եանց, էգուց՝ ...օվ,
ալօր՝ ...օվօ, մին փարան էլ նամարդօ-
թուն անըմ չըն։ Մօսկօվիցըն կապտալ կի-
րըմըն. Մօսկուսկի, «Լօղդինսկի», «Բեըլինս-
կի», «Պարիժսկի» դա էլ ապրանքատիրօջ-
ներին սիրտ մըխիթարութուն ա—մին փա-
րա նօր ջուլուս արածներ էլ վէր շտահ օ-
նէն կապէլի կըրըմըն «Նադէժդա», «Սաիւզ»,
«Արշալոյս» հարայ բու բաշտան ըն անըմ,
դա էլ լաւ ա, ամմա լաւ չի վէր կիըըմըն
«Էլըրուս», «Կազբէկ», «Արարատ» բա լաւ,
էսօր Լօդզի ջհուդը եա Մօսկօվի խախօլը
հունց պըցլանա էտ դաղդաղան սարերը.
Ղօրթ ա խօսումըմ, ամմա սէրտըս արուն ա
կօխում—տի կանէք վէր Ռուսէթ ձէր ա-
նունի իրան խաչ կըքաշէն, մին հացի տուռ-
նը տա էր—տա էլ իրէս սեւութին արիք—
թաքաւըրական զուլում հային տամ չըն,
օրիշ ազգ հային պահում չի, մնացալլա մին
գուլլա տինէլ կտկաղին։ Ախըր խէ՞ չըք ձեր
եօրդանի ըգօրա վէնր մէկնըմ, տես Ռուսէթ
էրկու հարուր տարւա քարխանա կա, պա-
պերին եկալլ ա հասալ ժառանգին։ Տըրան
համար, ադէր, դու խօսէս վէչ, ղաղէրին
քշի-քշի չանէս, լաւ վախտ չի, էքուց ալօր
թաղա Ջատիկ ա. համ էլ ձեզ համար բէ-
նէֆիս, տանգիստարանից տօն, տօնից՝
հանգիստարան. չաքմաներըտ եղեցէք։
Ադէր, հա՛, կըտեսնէնք էլի։

Մնամ՝ Զաւի Խօճաօինեցի

դարիմ. եա չէ, ծըզ նման ժողովուրԹէն ուշունց տալը հունց անէ, Խլըրնէդ դէր Անտօնէն ա քնում. վէր փռնէք Թակիք, կլօխը կտկտիք. ասիք վէչ Թա քեօխւան իմ հաներն ա նրանաւում գեօւամիշընում հա՛. առանց էն էլ եա դեր Կարաբեղնում: Աւալ աբուռ հայեա կար, մեծն ուրան տեղն օնար, կուճուրն ուրան, հնչան վէր ախճիգը 10—11 տարեկան ըլմաղ վախտն ենք փսակում, աբուռն հրեսին ամմա մհէգ, պահում ըն չըւիլը բըւԹառելը, հնչան, ծեր փըսըԹունան, ամմա մհէգ էլ կփսակիմ է, դէ քյնի մատնէ տեսնամ էն վէր վարԹապիդն ա կեաս փարաջաս վեր օնէ: Հունց անիմ, տխտակէս տակը նի ըք կցրալ սուքը չըպտուր, եա կրի ամեն պէն ըսի տիւք Թմաշա ընիք: Սիրելի ժողովուրԹ, վեր Քրիստոծը գիւղայ ուրան կլխէն գեալաջաղը. ըհ տոնըտ շինւի, դէ սօրփ ա ըլի, ղըմժղըվարի մհակը եր չը կալաւ ՅուԹէն ջանէն ըլաւ, ասից. «եր կաց քյնի պէնեդ կաց, համուԹ քեզ հետէ. իմ ամագյը աչկերտ օնէ: ՅուԹան վէր քնեց. Քրիստոսը պեղարճ հացը կտորից, տւաւ աշագերդներէն, Թա սայա իմ մարմիը. մարմինն էլ կրափա ռմսէն կասին, առէք, կերէք, խտակ կինին էլ ածից, խտակմ ասում Է՛լ ստեղէ ղըկոը ճրան չար, էն օրը Լեալունց Խուդանը մին բօԹուլ ըղարկալ ար ըծեցէ քըցըխամանը. տւաւ աշագերդներէն, Թա սա էլ իմ աբունն ա խմեցէք: Գիդաք խէ ընդըրմէւ. տեսաւ վէր ժողովուրԹը անիրեա, Թուրքացալա, ասից դէ կլօխը ծերը քարը լհեա աս եա քնացէք մին Ֆնու մէս կերէք, աբուն խմեցէք: Լըհա ըղորԹ վեր լուսահոգին հունց վէր ասեց ընդի էլ տեռաւ. մարԹիք լօխ զուրուր տօն քանդող տիւս եկեն, մին մընու աբուն խըմող:

Լհա էս սհաԹէս, էս սուրբ ժամէն մաչին դօղրուն ըսեցէք Անւանց Մուսէսին արնան վեր տաս քիԹը զեռ խուդաբախշին խմել չի՛, անպաճառ էլ խմէ: Մըհեդ ձեզ ասըմում, վեր բօլա շնօԹուն անիք, խելունք կացէք: Էս կդակ կարԹիլը ասում ըն շհեարներումը երացած ա, ասըմ ընք մընք էլ չկարԹինք, դօղրուսի, խափիլն էլ չի մին պէն, կրԹլական ինք, ամմա դէ կլխնէս օյին ա եկալ. երկու շեբեԹ կնի, կդակէն կիրը էն ալընըկակեօղ Տաքյա դէրը եկաւ տարաւ, Թա չպիրիմ, իրեք հետ է մարԹ ըմ ղարկալ, նոր ա ինձ ըսալ. կրեցենք վեչ Թա սերտինք: Հինչ վեր իսա, ժողովուրԹ, կդակը լեց ընիլու մհարա, դէ լէց ըլէք»: Դէր Կարաբեդը քարուզը վէր պրծաւ, հախ Աստծու աջըղըս խէ եկաւ, ախր Աստուծ եր կոնէ, ՀդրուԹա նման հէքյեալ շէնը առանց կդակ Ֆնայ. ա՜խ... էլ հիւր սրտա լեց տիւս եկաւ մին քանէ կնէգ «ըհո՛ւ» ըրեն-դէրը Թա» պըծաւ ժամը, մհէգ կարող ըք խըչըհամբուր անէք», ափարըմ ժողովուրդ, լօխ Թեզունքը նշանց տւին դէրերին, կապէկ տւող չըլաւ. էքսը օրը ծինը նի կալաւ, մհէգ համ ժողովուրԹն ա կզնւած դէրերին երա, վեր կդակը կրԹացալ չըն, կնանէքը առանձ լեց ըն Ֆնացալ, համ դէրերն ըն կզնւած, վեր խըչըհամբուր չըն ըրալ, կդակը չկըԹելին խաԹրու: Վայ տաքյա դէրին մեխքը: Ախպէր ասում ընք՝ Աստուծ պարկաջուլ ա. եա իմ Աստուծը էն հեալա մեզ խըէգա. հունց անէ Աստուծ վէր պարկանա վէչ էս եաշս քաշալ ըմ, հեալա սհէնց օԹի չմ տեսալ:

Էս օԹին, Թավէր սօր ու էքուց սաղ Ֆնացէ չետկէն քարուզն էլ կըկրիմ՝ եանի քի էլ հա կնի:

Մնամ ձեր քեռու տղայ՝

Սաքի

ՊՈԿԻԱԾ ՏԵՐԵՒՆԵՐ

1. «Համբերութեան դասընթաց»

—Հայրիկ, ես ուզում եմ համբերող լինել: Ի՞նչպէս սովորեմ համբերութիւնը:

—Իմ խորհուրդն է՝ կարդալ հայերէն օրաթերթերում «կաթողիկոսական ընտրութեան» մասին անվերջ գրւող յօդւածները մինչև վերջ, և դու ոչ միայն համբերութիւն կըսովորես, այլ և իրաւունք կունենաս «Կովկասում հայերէն գրքեր չտպող ընկերութեան» վարչութիւնից համբերութեան առաջին մրցանակն ստանալու:

—

2. Ուսումնարանում

Ուսուցիչը (գրատախտակը մաքուր չսրբող աշակերտին)—Սիրելի բարեկամ, դու կատարեալ խոզուկ ես եղել: Այդ խօսքը թող ձեր սրտին չդիպչի, ես խօսում եմ ձեզ հետ ինչպէս հայր:

—

3. «Շատ յաջող»

—Յարգելի տիկին, ինչպէս անցաւ բարեգործական նպատակով ձեր կազմած զբօսանքը յօգուտ որբերի: Շատ ծախեցիք:

—Զբօսանքը շատ յաջող անցաւ... երկու աղջկերանցս համար էլ փեսացուներ գտայ:

—

ո. Բացատրութիւն

Դուստրը.—Հայրիկ, այ, այնտեղ փողոցում կանգնած այն կինն ում է սպասում:

Հայրը.—Ո՞ւմը... ըը՛... նա, դստրիկս, սպասում է մի պարոնի, բայց ինքն էլ լաւ չէ իմանում թէ ինչպիսի պարոնի:

—

5. Ճարտարապետը

—Այդ աղջիկը լաւ ու ամուր շէնքս ունի: Հարկաւոր է միայն իմանալ, նրա ներսում օթեվանել կարելի՞ է թէ ոչ:

—

6. Պրոֆեսորը

—Խնդրում եմ ձեր ամբողջ ուշադրութիւնն այսօր ինձ նուիրէք: Ես նկարագրելու եմ մարդակերպ կապիկների բնապատկերը և համարձակւում եմ յուսալ, որ դուք ձեր հայեացքները դարձնելու էք առանձնապէս իմ կողմը.

—

7. Թանկագին հարց

Նա է.—Յարգելի պարոն, ի՞նչ կարող էք ասել կանանց հարցի վերաբերեալ:

Նա.—Ո՛հ, այն, որ այդ հարցն ինձ շատ թանկ է նստել:

Համայնացրեց՝ Եզօպ ծայր. վարդապետ

ՆԱՄԱԿ ՍԱՂԻԱՆԻՑ

—

Մեծապատիւ էֆէնդի

Կասպար աղա Կալատուզօվին

Կըխնդրէի պատւական «Խաթաբալի» ոսկէտառ էջերում տեղ մը տայիք քանի մը խօսքէրուս, որով ծառայութիւն մը մատուցած կըլլայիք ազգին:

Ինքս մանչ մը եմ՝ իսկ հայու զաւակ, բայց չեմ գիտէր ի՛նչ քամին է ձգեր ինձ հոս, անանկ մարդկանց մէջը, որ ոչ ես բան կըհասկնամ իրենցից, ոչ ալ իրենք ինձ կըհասկընան:

Մի բան միայն պարզ գիտեմ, որ ես հայու զաւակ եմ, վասն զի հայու հմար սիրտս անանկ կըճմլէ, անանկ կտոր-կտոր կեղնի, որ կուզենայի կեանքս ու շունչս տալ հայերուն: Եւ ատոր հմար կուզենայի քանի մը բան սովորցնել աս ժողովուրդին. քանի որ աս ժողովուրդը կուլտուրապէս յետ է մնացած: Ադոր հմար ալ ամիսըմ առաջ գրեր էի ձեր քաղաքը՝ «Գիւղատնտեսի» խմբագրատունը, որ 20 հատ ձու ղրկէին. կուզենայի որ նախ թռչուն պահելը սովրցնէի: Երկար սպասելէն ետքը, «Գիւղատնտեսի» վերջին համարում կարդացի, ուր ինձպէս մէկին պատասխանած էին աս խօսքերով, որ «ձուն չի կարելի փոստով ղրկելը փչանայ կը, լաւ կըլլար օր մարդ մը ըլլար ան բերէր»:

Հիմա ձեզի հարցնեմ կը, էֆէնդըմ Կասպար աղա, ադ գիւղատնտեսները ի՛նչ կըսեն, որդէ՞ց մարդ գտնենք ու ղրկենք Թիֆլիզ 20 հատ ձուի հմար: Ասենք աս ձեզի մարդ մ'րժէ ատտից գալ Թիֆլիզ 20 հատ ձուի հմար. է, կամ թէ ի՛նչ կըսէ լոողը, չէ՞ ասիլ, աս մարդը խելար է, 25 րուբլու չափ փարա ծախսէ կը ու կերթա Թիֆլիս 20 ձու բերելու հմար: Վերջը, ի՛նչ ցաւցունեմ ձեր գլուխը, էֆէնդըմ աղա և րկու օր երեք գիշեր գլխուս զօռ տալէն ետքը, անանկ հնար մը գտայ օր հազիւ թէ ժամանակակից պրօֆէսօրները կրնան ատանց գիւտ մը անել:

Ատանկ գիւտը պարծանք կըլլա ըսելը,

ՀԱՒԼԱԲԱՐԻ ԷՋՄԻԱԾՆԵՑՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱՐԵԿԱՐԳԻՉԸ «ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆՆԵՐ» Է ԱՆՈՒՄ

—Ախմա՛ր ինչի ես ծեծում է. արխեւնլեայ եղայ։
—Բարեկարգիչ եմ, ես քու հէրը. . բա ինչպէս եկեղեցին բարեկարգ եմ որ մի քին էլ գլախս չփորձեմ։

ՄՍԱՎԱՃԱՌՆԵՐԻ ՄՕՏ—ԶԱՏԿԱԿԱՆ ՕՐԵՐԻՆ

—Ա՞յ մարդ էդ ինչ գառ կամ գոճի է...
—Իժում ով է ասում, վուր գառ ան գոճի է՞, հէր օխնած մի անգամ էլ...
—Ի՞նչ. մինեքը՝ գոճիներով տեղ իսկ կատուները գառան տեղ ուտինք։
—Հա, ինչ կայ վուր. պտէք եօլա գնաք՝ բա խօ չէք կարա քաղցած մնալ։

օր ասեմ խսկական Հայաստանի հարազատ զաւակը կրնայ ընել:

Իմ գիւտը այսպէս է՝ ձուերը երկու ժամ եռման ջրի մէջ եփել, անկից յետոյ զգուշութեամբ դարսել պուզի մէջ և պահել ուղիղ 5 ժամ. անկից յետոյ փաթաթել մէկմէկ մաքուր բամբակի մէջ, և զգուշութեամբ դարսել յատուկ իրա համար՝ պատրաստած փայտի արկղի մէջ ու վերան ալ գրեն «ОСТОРОЖНО» բառը ապա ղրկել ցանկացողներուն:

Իմ աս հնարքով մի հատ ալ չի փչանալ, իսկ ուրիշ հնարքով 100—50 տոկոսը փչանայ կը:

Նամակիս հետ ղրկում եմ ձեզի 18 ղուրշ, խնդրեմ կը իմ աս դիւտը յայտարարէք ազգային օրգան «Խաթաբալա»-ի առաջին երեսի վրայ. բայց խնդրեմ կը անունս խոշոր խոշոր տառերով գրէք, վասնզի աս իմ միակ փափագս է:

Խնդիր մը ալ ունիմ ձեզի ընելու՝ խընդրեմ կը կանտօրիտ մանչերից մէկը ղրկէս «Գիւղատնտեսի կանտօրը, և այնտեղ ալ իմացուցանէ իմ նոր գիւտի մասին, որը մեծ ցնծութիւն առաջ կըբերէ անոնց մօտ, և աստ թող ուզածս 20 ձուն թեզմ ղրկեն, վասն զի մէ ամիսըմ առաջ ասածս թուխսը շատ ջուրը կոխելէն ու հանելէն փետուրները թափեն կը:

Հնարագէտ Ղարաշ

ՆԱՄԱԿ ԱՇՏԱՐԱԿԻՑ

Դասպար դայի ջան, նախ շնորհաւորում եմ ձեր Զատիկը, օղլուշաղով, էրէխով միասին: Ու երկրորդ էս մի յօդւածն էլ խընդրում եմ տպես ձեր աղիզ «Խաթաբալում»:

Դայի ջան չենք իմանում մենակ մեր տեղնա խարաբ էլի՞լ, թէ սաղ աշխարն ա ընենց էլիլ:

Էս մեր աղիզ օրերը որ գալիս ա էլ հօ էս կնանոնց ու աղջկերանց ձեռիցը կարմ չենք պրծնիլ.

Ախպէ՛ր, սաղ դառել ա մեծ շլապկա, վիսոկի կապլուգ սապօգ, մէկէլ պօչաւոր մինթանայ*). դէ արի չարչարւի, որ ըդարի փողը դզես: Դայի ջան, խեղճ մարդկերանցը բշերով վեր են կացնում ղրկում բանելու, օրական 50 կոպեկով առանցի հացի, Խօշկամուզ, չունքի էտ փողովը իրանց համար շլապկայ առնին, որ էս թաւուր աղիզ օրերը դուրս գան իրանց շանց տալու:

Փիլիպոսանց ու Մաթէոսանց հարսներն էլ են շլապկա դնում, համ էլ պոչաւոր մինթանա հաքնում. այ դրանք պոչաւոր աստղի տակը ըլեն, ինչ մեր հոգին հանեցին հա՜...

Հէրու պօչաւոր աստղը գալիս էր, տէհաւ որ իրանից երկար պօչաւորներ շատ կան, էն գնալն ա որ գնած:

Դայի ջան, սրանց մնում ա մի մօեղա պակաս ընէլ. Փալանդուզ Մկօի կարած սիմբատիչնի փալան ա ըտուր էլ ղակաղ տանք թող գայ էտ ցաւիցն էլ պրծնենք, տեսնենք վերջ էկող Զատկին ինչ պտի ուզեն: Հմա մոռացա, մի բան էլ կայ. մեր գեղի թազա պսակւած հարսները քաղցրեղէն շատ են սիրում, ընենց որ, պարապած են կանֆէտ ու իրիս ուտելով. դրանց գինն էլ ըստեղ շատ ա թանգացել, ըտիան ղըրկեցէք, թողէք մի քիչ էժանանա: Հասցէն Աշտարակ, նոր պսակւածներին բաժանել հաւասար կերպով, բայց ով շատ ուտի, նըրան շատ տալ:

Քո եզան Ծնգլիկ

Ք Ա Ղ Ց Ի Դ Ե Ղ

—Զարմանալի է ամեն մի հիւանդութեան դէմ դեղ գտնւեց, իսկ քաղցի դէմ ոչ մի դեղ մինչև այժմ չի գտնւել:

—Ի՞նչու էք զարմանում, դրա դէմ վաղուց ի վեր դեղ կայ:

—Ի՞նչը:

—Հացը:

Ս Տ Ա Տ Ի Ս Տ Ի Կ Ա

—Եթէ ամեն մի բնակիչ քաղաք. կրանտներից օրական գործ ածի 2 վեդրօ պղտոր ջուր, այն ժամանակ տարւայ մէջ ուպրաւան կօգտւի մի քանի հազարներ:

—Եթէ մամուլի արձակած սայնի բըշտիկները ի մի գումարենք, կըստացւի մի այնպիսի օդապարիկ, որով մի օրում կարելի է 3500 անհանգիստ տարրերի դժոխք թռցնել:

—Պ. Ասիլեանի յօբելեանին արտասանեցին 150 ճառեր և կարդացին 306 ուղերձներ. եթէ ամեն մի ճառը 14 շայով ծախենք. իսկ ուղերձների գրւածքան 18 կոպէկով, կըստացւի մի գումար, որով պ. Ասիլեանը մինչև Խօջիվանք ապահովւած կըլինի:

—Եթէ մէկի իշտահին բացախ ցանենք, այն ժամանակ նա իր կերած բօխկերը ժամուկէսում կարող է մարսել:

—Եթէ ամեն մի ընտանիք միջին թւով Զատկին ծախսեր 3 ր., այն ժամանակ բոլոր բնակիչները ծախսած կըլինէին մօտ 100,000 ր. մի գումար, որ եթէ ինձ տային փափախս քէշը կըդնէի մինչև Յիսուսի 4-րդ գալուստը:

—Ա. Քալանթարը իր առաջնորդողների տակը տարւայ մէջ 3000 անգամ կըգրի «կըշարունակւի». 400 անգամ՝ «սակայն այդ մասին հետեւալ անգամ», և 500 անգամ «մենք այդ հարցին դարձեալ կըվերադառնանք»:

Մենք էլ ստատիստիքայի հարցին դարձեալ կըվերադառնանք:

Փարեմուզ

ԽՕՍԵԼՈՒ ԱՐԻԵՍՏԸ

(Տաճկական հէքիաթ)

Սուլթանը երազ տեսաւ:

Սուլթանը երազում իրեն տեսաւ գերեզմանոցում:

Գերեզմանատանը կանգնած էր մի մշտադալար նոճի: Դամբարանների արանքում բուսել էին ծաղիկներ:

Քնքոյշ և ուրախ ծաղիկներ:

Բայց յանկարծ կիզիչ հով փչեց և ուրախ ծաղիկները չորացան, իսկ վշտահոտ նոճին, որպէս սև ծխի սիւն բարձրացաւ և շիրիմներին ցոյց տւեց երկինքը:

Սուլթանը նայեց երկնքին:

Երկրի վրայ փռւեց աստղերի ժանեակ:

Եւ երկնակամարի վրայ նրանց միջով լողում էր լրիւ լուսինը:

Բայց յանկարծ չալղուն բարձրացաւ և աստղերը թոթափեցին երկնքից:

Եւ երկնքի երեսին մնաց միայն լրիւ, հանդարտ լուսինը:

Սուլթանը սարսափած զարթնեց:

—Ալլահ, մենակ սուլթանն է: Ալլահ, յաւերժական նոճին է մենակ և յաւիտենական լուսինը երկնակամարի վրայ:

Եւ հրամայեց կանչել իր մօտ արքունական երազ բացատրող ծերունուն:

—Ահա ինչ տեսայ ես երազումս:

Սուլթանը պատմեց նրան իր երազը:

Գրբացը մի քանի ակնթարթ մտածեց, համբուրեց փադիշահի ոտքերի տակի հողը և բացականչեց.

—Սարսափելի երազ է: Նա առաջ նախօսում է քո մերձաւորների վշտալի վիճակի մասին, ողորմած տէր: Նրանք բոլորը քեզանից առաջ պիտի մեռնեն:

Սուլթանը կանայք ունէր, գեղեցիկ, որպէս լուսին, աղջիկներ ունէր, գեղատեսիլ, ինչպէս աստղերը, որդիներ ունէր, որոնց սիրում էր, ինչպէս իր սեփական արիւնը:

—Եւ դու կըտեսնես, փադիշահ քո բոլոր մերձաւորների մահը:

Սուլթանը վշտացաւ:

—Զգիտեմ, վիճակւած է ինձ իմ մերձաւորների մահը տեսնե՞լ, թէ՞ ոչ: Բայց որ ինձ մօտիկ մէկի մահը կըտեսնեմ—այդ ճիշտ է: Այսինքն քո...

Եւ փադիշահի հրամանով, պալատական գրբացին տեղն ու տեղը գլխատեցին:

Սուլթանը հրամայեց նոր գրբաց գտնել:

Բայց այն ժամանակից, երբ սկսեցին գըլխատել, գրբացների պաշտօնը դարձաւ պատասխանատու:

*) Մի վախենաք, «պոչաւոր մինթանաները» վերացւել են: Կանայք այժմեան նեղ շալւարներ են հագնելու՝ ժանեակներով և ծոպերով զարդարւած, ինչպէս աւալ ժամանանակ ձեր գիւղացի «քեօհնա» պարւաները հագնում էին ղանաւուզ փոխաններ:

Իսկ պատասխանատու պաշտօնի համար այնքան էլ հեշտ չէ մարդ գտնել։

Բոլոր նշանաւոր աստղագէտները հրաժարուեցին այն բարձր պատուից, փադիշահի մօտ երազ բացատրող լինելու պատուից։

—Ես ինչ գիտութիւն ունեմ որ, ասում էին ամենքը։

Բայց ահա արքաների արքայի դրանը յայտնուեց մի դերուիշ պատառոտուած հագուստով։

Նա ասաց մեծ վեզիրին։

—Երկրային Ալլահի ստուեր, ես կուզէի ձեր ամենաողորմած և իմաստուն տիրոջ երազներ բացատրողը լինել։

Մեծ վեզիրը խղճահարութեամբ նրան նայեց։

—Մտածել ես արդեօք, մօրս տղայ, թէ ինչ պատասխանատուութեան է ենթարկուում փադիշահի երազ բացատրողը։

Դերուիշը պատասխանեց.

—Ես ամեն ինչի մասին մտածել եմ։

Այդ ժամանակ մեծ վեզիրը հառաչեց։

—Թող քո ասածը լինի, քրոջս տղայ։

Եւ դերուիշին տարաւ սուլթանի մօտ։

—Վերջապէս, փադիշահ, գտնուեց մի մարդ, որը յանձն է առնում ձեր իմաստուն երազները բացատրել։

—Թող մօտենայ.—ասաց սուլթանը։

Սուլթանը նստած էր դահի վրայ, պալատականներով շրջապատուած։

Պալատական դահիճը,—«փադիշահի թրի պահապանը», ինչպէս կանչում են նրան Արևելքում,— կանգնել, աչքերը մեծ-մեծ բացած նայում էր իր փադիշահին և միայն նշանի էր սպասում, որ թուրը պտտեցնի և դերուիշի գլուխը թռցնի։

—Ես երազումս ինձ տեսայ գերեզմանոցում, ասաց սուլթանը և պատմեց նրան իր երազը։

Դերուիշը մի քանի ակնթարթ մտածեց, յետոյ համբուրեց փադիշահի ոտքերի տակի հողը և բացականչեց.

Հրաշալի երազ է։ Բախտաւոր է նա, ում այդպիսի երազներ են այցելում։ Երջանիկ է նա, ով կարող կլինի այդ բոլորը գուշակել։ Բոլորը գրուած են ճակատագրի դրքում։ Բախտը կըպահպանի քեզ։ Բախտը կըպահի քո մերձաւորներին վշտից, որ նրանք քեզ մեռած չտեսնեն։ Դու կապրես նրանցից շատ երկար։

Եւ սուլթանը հրամայեց դերուիշին վարձատրել ոսկով ու պարգևներով։

—Ի՞նչ զանազանութիւն։

Ցիտարը գուշակեց սուլթանի մերձաւորների մահը, խելօքը երկար կեանք սուլթանին։

—

Այս հէքիաթը Աբդիւլ-Համիդի ժամանակներում սիրում պատմել Թուրքաց ցենզուրայի կառավարիչը՝ Կ. Պոլսի լրագիրների խմբագիրներին։

—Կարևոր է, իմ բարեկամներ, ոչ թէ միայն ասել, այլև կարևոր է՝ ինչպէս ասել։

Վ. Դորոշեւիչ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Գանձակ 16-ն ապրիլի

Ամսոյս 15-ին, տեղացի՝ Գրիգոր Յովհաննիսեանը իր «պատիւը»... վիրաւորուած համարելով «Խաթաբալա»-ի 15 №-ում լոյս տեսած Գանձակից գրուած նամակից և այդ վերագրելով իմ գրչին, քաղաքիս առաջնակարգ փողոցներից մէկի խանութի առջև, մի խումբ մարդկանց ներկայութեամբ, ինքը իրեն կորցնելով փողոցային հայհոյանքների այնպիսի տարափ թափեց կարծեցեալ յօդուածագրիս հասցէին, որին կընախանձէին Պուրիշկևիչի նման հայհոյող ժուրնալիստներն անգամ. էլ չեմ ասում լամուկները. նա երկար կըշարունակէր իր հայհոյանքները, չխնայելով նոյն իսկ, անց ու դարձ անողների լսողութիւնը. եթէ կողմնակի մարդիկ նրան չհեռացնէին։

Մենք անուշադիր կըթողնէին Յովհաննիսեանի՝ իրեն միայն յատուկ վարմունքը, եթէ նա յաւակնութիւն չունենար, կրթեալ մարդկանց շարքը դասելու, և անդամագրելով տեղիս «Кружок»-ին իւրաքանչիւր օր այնտեղի ընթերցարանում միաժամանակ չկարդար մի քանի թերթեր։

Բարեվիտ ընթերցողների դատաստանին թողնելով վերը յիշած տգեղ արարքը, մենք մեր կողմից բանաստեղծի նման կըբացականչենք.

Բայց ինչո՞ւ հայ-եւրոպացին,
Խօսքի, վէճի, բռնելիս,
Սիրում է քացին ու քացի է միշտ տալիս.
Ինչո՞ւ, թէ որ լաւ միտք անէք,
Փալան փոխած ... երբէք,
Ագնիւ նժոյգ չի գառնալ։

Ղող. Վերդիեանց

ԳՐԱՍԵՆԵԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Յիշեցնում ենք մեր թերթերի ապառիկ կամ մաս-մաս վճարող բաժանորդագրուողներին, որ շտապեն իրենց վճարները հասցնել գրասենեակին

. Հակառակ դէպքում, կըդադարեցնենք թերթերի առաքումը։

Լոյս տեսաւ առանձին գրքով և վաճառւում է

ՆԱՐ-ԴՈՍ

ՊԱՅՔԱՐ

ՎԷՊ

Գինն է 75 կոպէկ

Գլխաւոր պահեստը «Սուրհանդակ»-ի խմբագրատանը, ուր և դիմում են գումարով գնողները։

Типографія „ГЕРМЕСЪ" Мух. 13. Ժամանակաւոր Խմբագիր Ս. ՄՈՒՐԱՑԱՋԵԱՆ

ԽԱՏԻՍԵԱՆԸ ՄԻՆԻՍՏՐ ԿՈԿՈՎՑԵՒԻ ՄՈՏ



Կոկովցեւ.—Դուք, յանձին իմ՝ մի ջերմ պաշտպան ունէք Թիֆլիսում համալսարան հիմնելու օգտին աշխատող. բայց, տասնեւերկու այսպիսի քսակներ աւելի շուտով եւ դրականօրէն կլուծեն Թիֆլիսի համալսարանի հարցը քան թէ իմ պաշտպանութիւնը եւ ձեր սիրունիկ ճառերը:

—Այս հայելին ծուռ է՝ նրա համար էլ մենք այսպէս տձև ենք երեւում: (հաս. գործիչ. կարծիքը)
—Չէ՛ բարեկամներ, դուք ինքներդ էք ծուռ. խորդ ու բորդ և զուր հայելուն էք մեղադրում: (Խաթաբալի ձայն):